ոսկին ինչ մեծ ղեր խաղացեր էր այդ անխելք ու կարճատես մարդիկը մոլորցնելու»:

Պատրաստութիւնքը շարունակեցան՝ եւ նոյն միջոցին ինչ որ կ'անցնէր Հայաստանի Վասակ մանրամասն կ'իմանար: Կայսրը Կարին հասած վայրկենին՝ յունաց զօրավարք եւ հայոց իշխանք միաբան՝ Թէոդորոս Ռշտունի պատճառ ամէն չարեաց ամբաստանեցին. նա էր, որ Մարդոցէից պատերազմին մէջ պատճառ եղած էր յունաց պարտութեան, նա էր որ զամենքը գրգռած էր հապստամբութիւն, նա էր որ զամենքը վախցնելով պարտաւորել էր արաբաց հետ դաշինք դնելու:

Հոն եկաւ նաեւ Ներսէս կաթողիկոս, Բագրատունի իշխանաց հետ՝ Տայոց գաւառեն, ամրապնդելու համար այս ամբաստանութիւնը յունաց զօրք վատութեան նախատինքէ, հայոց իշխանք եւ կաթողիկոս ապստամբութեան յանցանքէ արդարացան, եւ ամէն ինչ Ռշտունի զօրավարին վերա բեռցնելով, նզովեցին եւ դատապարտեցին եւ ձգեցին զինք ամէն պատուոյ եւ իշխանութենէ, եւ իւր փոխանակ իշխան մը ղրկեցին քառասուն հոգուով եւ կայսերական հրովարտակաւ: Իսկ Թէոդորոս բռնեց կապեց այդ մարդիկը եւ ղրկեց ոմանք կղզիները, ոմանք Բաղէշու բերդը: Եւ Կոստանդին իմանալով այս եղածները, կը սպառնար ջնջել, ոչնչացնել բոլոր երկիրը: Եւ Մուշեղ Մամիկոնեան, Ներսէս կաթողիկոս եւ միւս իշխանք գետնամած կ'աղաչէին՝ իւր բարկութիւնն իջեցնել կ'աշխատէին, մինչեւ տարին զինք Դուին եւ հոն կաթողիկոսական եկեղեցուոյն մէջ, իւր եկեղեցիեն իբր հերետիկոս դատապարտեալ մարդուն ու քահանայից յետոյ հաղորդուեցան: Իսկ զօրքը ցրուեցան Վրաց, Սիւնեաց եւ Աղուանից երկիրները, աւերեցին ո՛ւր որ կրցան, բայց Սիւնիք եւ Աղուանք չխոնարհեցան այդ կայսեր առջեւ:

Երբ լուր հասաւ կայսրեն դեռ գարուն չեկած թէ Վասակ պատրիկ՝ կուսակալ Փոքր Հայոց ապստամբեցաւ, եւ թէ Կոստանդնուպոլիս նաեւ ապստամբութեան ցոյցեր կան, առաւ զօրաց մեծ մասը, դիմեց Կապադովկիա Վասակի վրան: Բայց յաղթուեցաւ չարաչար, եւ դարձաւ գնաց Կոստանդնուպոլիս կորակոր, շփոթած եւ հուսահատ. եւ հոն նոր անգթութեամբդ աւելի ատելի եղաւ ամէնուն:

Իսկ կաթողիկոսը Թէոդորոսի երկիւղեն Տայոց գաւառը փախաւ յունաց զօրաց հետ, բայց նոքա եւս չկրցան դիմանալ, վասնզի հայոց զօրավարը հասաւ ետեւնուն՝ հալածեց զիրենք անտից: Եւ խմբուեցան բոլոր յունաց զօրքերը Կարին. Մաւրիանոս իրենց սպարապետը մեծ պատրաստութեամբ կը սպասէր